

ու նշանի հմար վանքի մէջը մէ ծակ թողին ջրհորի պէս: Հմի որ մարդ աշմ է եղ ծակէն մէ քիչ պըլ-պտում է տակը ծովի ջուրը: Ենքան որ վանքը բանձր է շինած ծովէն:

— Լուսաւորիչն որ Տրդատի քովը Էնքան զուլ-լուղ էրաւ, իրա հօր մեղքերուն թողութէն էղաւ:

— Ըրա չէղաւ, բալա քան, ամէն մի բարի աւ-լաղ իրա հօրն ու մօր հոգուն շահ է: Ըսմ են թէ նոր էղած տղէն, որ կնքելուս մեռնի մէջ մեռնի, էղիկ ամենէն օգուտ է: չունքի որ աղունիկ կէղնի, թռնի կերթայ երկինքը ու հէրն ու մէրը էն զոյէն նեղ տեղ ընկած վաղթը կուգայ կաղատէ:

— Մամի քան, ըսմ են թէ մարդ որ մեռնի մաղէ կարմնջէ պտի անցնի, էղիկ զօրթ է:

— Հա:

— Ըրա էղ մաղէ կարմունջը չի կտրի:

— Թէ որ արդար է, չի կտրի ու թեթե կանց-նի, թէ որ մեղաւոր է, չի կրնայ անցնի ու վէր կընկնի:

— Է, որ վէր ընկաւ ի՞նչ կէնեն:

— Կը գնեն կշեռքը, մեղքերը կը կշռեն ու կը տանեն իրա տեղը: Ընեղ ամեն մարդու իրան գոր-ծի դերա տեղ է շինած. լաւ մարդ է, էս գույէն լաւութէն է էրէ, լաւ տեղ ունի էն դույէն, չար մարդ է, չարութէն է էրէ, գէշ տեղ ունի:

— Չար մարդու տեղն ի՞նչ է որ:

— Կարէ կարամն է, ինչ է, տանեն կը քցեն կարէ կարամը, մէ խուփմ էլ կարսի բէյնին կը գնեն ու ընդեղ վառի կէրէցի, կը մնայ, օնչ մեռնելիք կէղնի, օնչ պրծնելիք:

— Լուսաւորիչ պապի հօր տեղն ի՞նչ է էղել:

— Առաջ Լուսաւորչի հօր աչքի մէջն է կոտոշ կոխած էղել իրա մեղքերու հմար: Հմա մէկ անգամ Քրիստոս Տէրը Լուսաւորչի հետ մեղաւորներու տե-ղերէն անցնելիս կուգայ Անտիո տեղն ու կէնէ թէ անցնի, հմա կը տեսնի որ Լուսաւորչի յետ կախ ընկաւ ու սկաւ խեղճ խեղճ հօրն աշել: Ըղեղ Քրիստոս Տէրը կըսէ. «Հա, ի՞նչ է, հօրդ տեսար, սիրտդ ցաւաց, որ ըլման է, թող կոտոշը աչքի մի-ջէն իշի, անկջի մէջը դրուի ու էղ տեսակ էլ կէղնի, որ մէ քիչմ կը դինջանայ Անալը ցաւէն:

ՄԱՆՐԱԼՈՒՐԷ

Միջազգային համաժողովներ (congress) — Ընտրուած վերջին ամիսը կա-րող է գիտնական համաժողովների ամիս կոչ-ունել: այս տարի Օգոստոսի ընթացքում տեղի ունեցան հետեւեալ համաժողովները. 1. Միւնխենում հոգեբանների համաժողով: 2. Փարիզում քիմիկոսներին: ժընէվում զուիցերական տեխնիքական ընկերութիւննե-րին: Հոգեբանների համաժողովին մասնակցում էին զանազան երկրներից 500 գիտնականներ, հոգեբանական այս միջազգային ժողովն հաշուով երրորդն է. քաւարական նախարար Ֆոն Լանդմանն ողջունելով հոգե-բաններին ասաց. «Յոյս ունիմ որ հոգեբա-նական համաժողովները պիտի օժանդակեն քառնալու այն մեծ վտանգը, որ ծագում է մի բանի հոգեբանական թիր տեսութիւննե-րից: Համոզուած եմ որ համաժողովները պիտի հաստատեն մարդու իւր արարքների համար պատասխանատու լինելը»:

Նշանաւոր գեկուցագրերի մէջ յիշատա-կելու արժանի են Փարիզցի հոգեբան Շառլ Բիշէի ծառը «sur la douleur» (վշտի մասին). Հալ-էի պրօֆէսոր Ֆ. Լիսցտի ծառը «պատժա-պարտ հատունութեան մասին» եւ դոկտոր Պրայէրի «մանկան հոգեբանութիւն» բանա-խօսութիւնը:

Գործադրական քիմիայի համա-ժողովն տեղի ունեցաւ Փարիզում նախա-գարութեամբ յայտնի քիմիկոս եւ քաղաքա-կան գործիչ Բերտըլլի: Շատ նշանաւոր էր գիտնական նախագահի ծառը, ուր նա հա-կիրճ եւ ամիոնի կերպիւ նկարագրեց քիմիայի աժման վիճակն եւ տուած ապագայի յոյսե-րը: Վերջին կիսադարեայ շրջանում քիմիայի յառաջադիմութիւնը նկարագրելուց յետոյ, շեշտեց այն կատարելագործութիւնը, որ քի-միան մոցրել է մետաղաքանութեան մէջ, նա միանգամայն յայտնեց իւր հաստատ հա-մոգումը, որ շուտով կը յաջողի միջ օդա-գնացումիւնը եւ երկարօրէն խօսեց այն քա-ղաքական եւ հասարակական փոփոխութիւն-ների մասին, որ քիմիան պիտի յառաջ բերէ: Բերտըլլն հետեւեալ խօսքերով վերջացրեց իւր ծառը. «Գիտնական հետախուզութեան ոգին կանգ չէ առնում» երբէք, նա անդա-դար յառաջ է դիմում ամէնքին դէպի գոր-ծունէութիւն է դրդում. նա շատ քան հասարակական կեանքում արդէն փոփոխել է եւ շատ քան էլ պիտի փոփոխէ, երբ ի շնորհս



սննդեան նիւթերի արհեստական պատրաստութեան, կը բարձրի մարդկանց միմեանց ստորադրութեւն գլխաւոր պատճառը:

Համաժողովին մասնակցում էին 1597 զիտնականներ, որոնցից 995 հոգի ֆրանսիացի էին, 157 Աստրիացի, 102 Գերմանացի, 53 Բելգիացի, 35 ուրա եւ այլն:

Զուիցիերիայի տեխնիքական բնկերութեանց համաժողովի նպատակն էր մերձաւորապէս միմեանց ծանօթանալն եւ նորազոյն գիտերի հաղորդելը:

Գրագիտութեան տարածումը. ֆրանսիայում սպորտն չիմացողների թիւն հետզհետէ պակասում է. 1895 թուականի նորակոչ զինուորներից 5:53% ոչ կարդալ եւ ոչ գրել գիտէին: մինչ այդ տոկոսն 1894-ին 5:74 էր, իսկ 1893 6:43:

Այս վիճակից շատ անելի քարեքախտ է Գերմանիային: ուր դեռ 1891—92-ին այսուրեք չիմացողների տոկոսն էր 0:45. իսկ միջին եւ հարաւային Գերմանիայում անելի պակաս, այնէ՝ 0:01%: Այսուամենայնիւ ֆրանսիան յառաջադիմում է, մանաւանդ եթէ աշքի առաջ ունենանք, որ 1890 թուին այսուրեք չիմացողների տոկոսն այնտեղ 8:44 տոկոս էր:

Ռուսաստանում գրագիտութեան տարածումը պատկերացնում է լուսաւորութեան պաշտօնէութեան կազմած ժողովրդական կրթութեան քարտէսը, որ այս տարի նիժնի նովգորոդի հանդիսում ի ցոյց էր տրուած:

Համաձայն այս քարտիցի Ռուսիայում երկու երկիր կայ միայն, ուր 100 ընակչի վրայ 6 աշակերտ է գալիս, այդ երջանիկ երկրներն են ֆինլանդիան եւ լիթւանիան: Կուրլանդիան, Էստլանդիան եւ խրիմը 100 ընակչի դիմաց 4—5 աշակերտ ունին, քացի դրանից եւ Կարոուլսի ու Սարատովի նահանգներն: Բոլն ուսական նահանգներից Պետերբուրգինը, Մոսկովինը, Տվերինը, Սմոլենսկինը, Կալուգայինը, Տուլինը, Օրեոլինը, Վլադիմիրինը, Ռեազանինը եւ Տամբովինը 100 ընակչի դիմաց 3—4 աշակերտ ունեն: Ռուսիոյ միւս մասերն տեղի սեւ գոյներով են հանդէս գալիս. այսպէս Ռուսի չրջանում 100 ընակչի վրայ մի ափողջ աշակերտ անգամ էի գալիս:

Զրիստոնէութիւնը ծափոնում կան 231 բողոքական քա-

րոգիչներ եւ 225 ամուրի քարոզչուհի, 139 քարոզական կայարաններ, 426 համայնքներ: 1895 թուին բողոքական են մկրտուել 2516 հոգի. բոլոր բողոքականների թիւն է 38,710: Զարոգչութեան աշակերտների թիւն է 295, տեղացի բահանայից 290, չրճեռնադրուած օգնական պատուորներինը 519: Զրիստոնէից ժողոված նուիրատուութեան քանակն է 68,000 ուրուրու չափ:

Ռուսական առաքելութիւնը միայն երկու քարոգիչ ունի. 22,576 հաւատացեալ, իսկ կաթողիկոսականն ունի 92 քարոգիչ, չրհաշուելով մայրապետներն ու եղբայրները, 80 կայան, 250 համայնք եւ 50,302 հետեւող:

Ծշմարտութիւնը հրաշագործ ֆրանց Շլատտերի մասին. — Բողոքական եկեղեցական թերթերից մէկը առաջ է բերում իւր սկանաւես թղթակցի նկարագիրն այս հոր Մերսիկայի փրկչի մասին: Շլատտերը կաթողիկէ էր եւ Կոլորադոյի մայրաքաղաքում կոշկակարութիւն էր անում. մի օր նրա գլխին փէց, որ ինքը ցատազար մարդկութեան բժիշկ է ուղարկուած: Այս միտքով դիմեց նա դէպի Կալիֆորնիա: ուր յաջողութիւն չը գտնելով յետ դարձաւ. վերադարձին նրան քանդող դրին իւր տարօրինակ ընթացքի համար, քայց շուտով արձակեցին եւ նա եկաւ Ալբուքիքքա: Մի քաղաքացու տանն իջաւ եւ լուր հանեց, որ նրա մօր կոյր աշքերը բժշկել է. որ մինչեւ այսօր էլ կոյր է: Այս համբալի շնորհիւ ահագին քաղմութիւն էր դիմում նրա մօտ, որոնց նա յայտնում էր թէ ինքը Զրիստոնէ է: Թղթակցի պատուորն ինքն անձամբ հարցունործել է նրան եւ վկայում է, որ նա իրեն Զրիստոնէ էր անուանում: Դէմէր քաղաքում մեծ եղաւ Շլատտերի փառքը, նա այստեղ օրհնութեամբ աշկինակներ էր քաժանում, որի առեւտուրն այնքան միծալաւ եւ առիթ տուաւ խարդախութիւնների, որ տեղական իշխանութիւնն արգելեց:

Շլատտերն այդ տեղ ծանձրանալով դիմեց դէպի անապատ եւ ամայի տեղերն եւ այժմ անցայտ է թէ ուր է:

Նրա բժշկութեանց մասին ասում են որ ծշմարիտ են, ումանք պնդում են, որ բժշկութեանը կրկին հիանդացել են, երբ սկսել են չր հաւատալ ելին: Նրա դաւանած սղգքունքներն յայտնի եւ որոշ չեն, երբեմն ինքն իրեն Զրիստոնէ էր անուանում, մերթ Մ. գիրքն գովաբանում էր եւ մերթ արհա-

մարտում: Զրիստոսին մի օր փրկել է քեփել էր հռչակում: միս օրը մարդ մի այլ ժամանակ երկրորդ Բուդդա ելն: Յամենայն դէպս այժմ դժուար է նրա մասին ճշմարտութիւնը լսել նոր Միքսիքայում ուր քաղմութիւ առասպելներ են հիտուել նրա անունով: հասնօրէն այդ մարդը խելագարուած մոնուման էր:

Մ ո ն ա ք ո յ ի խ ա դ ա ր ա ն ի հ ա շ իւր: Բիշ մարդ կայ որ Մանուքայի խաղարանի անունը լսած չը լինի: այդ փոքրիկ իշխանութիւնն կենդրոն է նորագոյն քաղաքակրթութեան ամենայն կրքերի եւ յանգանքների: Ամենայն տարի այնտեղ իւրեանց կարողութիւնը տանով են տալիս հարկւարտը մարդիկ եւ ապա յուսարատութիւնից անձնասպան լինում: Դատարանի հաշուից երեւում է որ այս տարի զուտ արդիւնք է տուել 13 միլիոն ֆրանկ: Ամբողջ արդիւնքն 50 միլիոն է եղել: սակայն դրանից ծախսուել են իշխանին տալիք հարկի եւ քաղաքի զուարմութիւնների համար մեծ գումարներ:

Այս ծախքերի մէջ հետաքրքրական է եւ այժմեան ֆրանսիայի համար որոշիչ այն հանգամանքը որ մեծ գումար է նշանակած փարիզու թերթերին իւրեւ կաշառ խաղարանի շուրջը կատարուածների մասին լուելու այսպէս «ֆիզարոն» այդ քանի համար ամսական 3000 ֆրանկ է ստանում: իսկ միս թերթերն աւելի պակաս: կան ամսական 250 ֆրանկ ստացողներ եւս:

Բ ա ր ծ ր կ ր թ ու թ ե ա ն հ ա մ ն մ ա տ ա կ ա ն տ ո կ ո ս ք Գ ե ր մ ա ն ի ա յ ու մ ք ս տ դ աւ ա ն ու թ ե ա ն ց: Գերմանական կայսերութեան մէջ 10,000 քնակչի վրայ 50 քարծրագոյն կրթութեան ուսանող է գալիս: Բողոքական 10,000 քնակչի վրայ գալիս է 55 ուսանող: 10,000 կաթողիկէն 32, ի ս կ 10,000 հրէի ն 333:

Գերմանական 6 մեծ տէրութիւնների մէջ հետեւեալ յարաբերութիւնները կան: Բաւարիայում 10,000 կաթողիկէ վրայ գալիս է 42 ուսանող: 10,000 բողոքականների վրայ 67: 10,000 հրէին 370: Փրուսիայում 10,000 կաթողիկէ վրայ 27 ուսանող է հաշուում: 10,000 բողոքականին 50: իսկ 10,000 հրէին 333: Վիւրտեմբերգում յարաբերութիւններն հետեւեալներն են: 53 կաթողիկէ 93 բողոքական: 590 հրեայ ուսանող ամէն մի 10,000 քնակչին: Բադենում հետեւեալ յարաբերութիւններն են: 41, 86, 417: Հեսսէնում: 50, 67, 333: Սաքսոնիայում 23:

40, 357: Ահա թէ ինչո՞ւ գերմանական գիտութիւնը զրականութիւնն եւ մանասանող մամուլը աւելի հրէական է քան տեստոնական:



Ա Ձ Գ Ա Յ Ի Ն.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ.

Ահա լրացաւ երկրորդ տարին այն օրուանից, երբ Սասնոյ ահաւի կոտորածի լուրն աշխարհ գորդեցրից, բայց ինչ շահեցաւ արդեօք խեղճ հայ ժողովուրդն այդ գորդիւնից: Պատմութեան մէջ անլուր եւ չը տեսնուած գործեր կատարուեցան այս երկու տարուան ընթացքում: Զրիստոնեայ պետութիւնները Սասնոյ կոտորածն ստուգեցին: պարտք համարեցին այդպիսի գազանութիւնների դէմ բողոքելու եւ առիթ եղան հայ սղգի ջնջման բռնիքը դնելուն: Վիւր հարիւր տարի հայը կրել էր թուրքի լուծը եւ արեան մէջ թաթաւելով պահպանել իւր ոգորմիկ գոյութիւնը: բատրիկութեան մէջ ապրելով արժանաչել էր նա վերջապէս որոշ հաւատարմութեան հրուշակի եւ վարում էր ստրկի կեանք: յանկարծ այդ հաւատարմութիւնը կասկածի տակ ընկաւ առանց հայի մեղքի եւ նա տուժեց հարիւր հազարաւոր զոհերով:

Զրիստոնեայ աշխարհի բոլոր ջանքերը ճնեցին մեռեալ բարենորոգումների որ սկսուեցան տմարդի կոտորածներով եւ վերջանում են ահա երկրի ամայնալով: Այս երկու տարուան ընթացքում շատ խօսուեցաւ եւ գրուեցաւ հայոց մասին, բայց իսկական ճշմարտութիւնը երեւան չեղաւ:

Հայկական խնդրի վերջին ծագմանից մինչեւ մեր օրերը այդ խնդրին մի շատ մօտիկ անձնաւորութիւն հետեւեալն ասաց:

«Հայերին մեղադրում են որ նրանք ապրտամբ են: որ նրանք յեղափոխական շարժումներ են գործում: որ նրանք գործիք են այլ ազգերի, բայց այդ ամէնն եւս սխալ է. հայ-